2022-2023 ուստարի

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի N2 հիմնական դպրոցի դասվարի աշխատանքային հաշվետվություն

Դասվար՝ Դ. Մովսեսյան

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1.Կրթական

- Առաջնորդվելով ԿԳՍՄՆ նախարարության հաստատած չափորոշչային պահանջներով, ստեղծել եմ տարեկան թեմատիկ պլաններ բոլոր առարկաներից և ներկայացրել հաստատման:
- Տարվա կտրվածքով նախատեսված բոլոր միջոցառումներն ու տեսադասերը, բաց դասը իրականացվել է:
- Թեմատիկ պլանով նախատեսված թեմաները լիարժեք ուսուցանվել են: Տոնական և հիշատակի օրերի բացթողումները խտացվել և ուսուցանվել են կիսամյակների ընթացքում:
- Զարգացել է բանավոր և գրավոր խոսքը: Կարող են պատմել շրջապատի և իրենց մասին:
- 2022-2023 ուստարում մասնակցել եմ վերապատրաստման դասընթացի՝ գնահատման նոր կարգի վերաբերյալ:
- Ուսարվա ընթացքում փորձի փոխանակման նպատակով կատարվել են փոխադարձ դասալսումներ, վերլուծվել դրանք:
- Լրացուցիչ աշխատանքներ են տարվել հետ մնացող աշակերտների հետ: Լրացուցիչ աշխատանքներ են տրվել նաև լավ սովորող աշակերտներին:
- Բոլոր առարկաներից ծրագրերը կատարված են: Տրվել է ամառային հանձնարարություն:
- Նախատեսված բոլոր թեմատիկ և գործնական աշխատանքները տրվել են ժամանակին /մայրենիից և մաթեմատիկայից ութական թեմ., երկուական գործնական, ես և շրջակայից երկու թեմատիկ, երկու գործնական աշխատանքներ/:

2. Դաստիարակչական

- Ուսումնառությունը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար ստեղծել եմ բարենպաստ պայմաններ, միջավայր, համապատասխան կահավորում, դիդակտիկ նյութեր, հետաքրքիր խաղեր:
- Սովորեցրել եմ փոխհամագործակցություն և փոխօգնություն՝ խմբային աշխատանքների, համատեղ արշավների, թատրոններ և այլ հաստատություններ այցելությունների միջոցով:
- Աշակերտների մեջ խորացրել եմ սերը ուսման, հայրենիքի, դպրոցի նկատմամբ: Սերմանել եմ աշխատասիրություն,պարտաճանաչություն և պատասխանատվության զգացում ,բարեխիղճ և հոգատար վերաբերմունք դպրոցի գույքի,դասագրքերի նկատմամբ:
- Սովորեցրել եմ գնահատել սեփական արարքները, ուղղել սխալները:
- Դաստիարակել եմ հարգանք մեծերի նկատմամբ, ուշադրություն՝ փոքրերի նկատմամբ:
- Ծանոթացրել եմ հայ և արտասահմանյան հանճարեղ մարդկանց կյանքին, նրանց գործունեությանը, կատարած սխրանքներին, կազմակերպել ենք ֆիլմերի դիտումներ, գրական ժամեր:
- Ձևավորել եմ հայրենասիրություն, այցելելել ենք հուշարձաններ, մատուցել հարգանքի տուրք:
- Աշխատասիրության և փոխհամագործակցությն նպատակով մշակել ենք դպրոցական մինի այգի: